



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. Ե. Տ. Ս. Բ. Ե. Բ.


Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ի. Տ. Ե. Լ. Ի. Բ.

Թ. Ե. Մ. Ա. Կ. Ա. Ն. Տ. Ե. Ղ. Ե. Կ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.

Վ. Ի. Հ. Ա. Կ. Ի. Ս. Հ. Ա. Յ. Ո. Յ. Ն. Ա. Ի. Զ. Ե. Ի. Ա. Ն. Ի. Ե. Ի. Պ. Ե. Ս. Ա. Բ. Ա. Պ. Ի. Ո. Յ.

Ա. Տ. Ե. Ն. Ա. Կ. Ա. Ն. Կ. Ա. Բ. Գ. Ա. Գ. Բ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.



Նոյեմբերի 7. — Գրիգորուպոլսոյ Հոգեւորական Կառավարութեան միջնորդութեան համաձայն՝ Առաջնորդական Ատենիս օրագրական եղբակացութեամբ որոշուեցաւ նոյն քաղաքին սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ լուսարարութեան պաշտօնը յանձնել ժողովրդական Դպրոցի ուսուցիչ Գրիգորի Ալմընթութեանց, որ իւր ժբաջանութեամբ կարող է նոյն պաշտօնն ալ կատարել անխափան, ինչպէս կվկայէ Կառավարութիւնը:

Նոյեմբերի 23. — Առաջնորդական Ատենիս ընդունելով էջմիածնի Սրբազումար Սիւնիոյդոսի

Բարձրագոյն Հրովարտակը, որ ի29 Հոկտեմբերի Համար 1488, շրջաբերական Հրամանագրովք ի28 Նոյեմբերի, պատուիրեց լրոյր Հոգեւոր Կառավարութեանց վիճակիս եւ քահանայից Տաւրիոյ, եւ այժմս կրկին անգամ կյիշեցնէ Ատենիս նոյն շրջաբերականին պատուէրը, որ եթէ պատահի ուր եւ իցէ վիճակիս մէջ Ալեքսանտրոփոյցի երիտասարդ Բալայ-Բէկ Վէրիլ-Խաչոյեանը՝ իրաւունք չունենայ քահանայ մը զինքը պսակելոյ, մինչեւ չվերջանայ նորա վերայ բացուած քրէական յանցաւորութեան բնոյժական Գործոյն Բարձրագոյն վճիռը, այն է իմասին անիրաւելոյ նորա առ Հռիփսիմէ անուն դուստրն Ախլցխացի տիրացու Գէորգի Տէր-Ստեփանեանց:

Նոյեմբերի 30. — Վիճակային Ատեանս շրջաբերական հրամանագրով պատուիրեց քահանայից Տաւրիոյ եւ բոլոր ստորադրեալ Հոգեւորական Կառավարութեանց, որ փոյթ ունենայ ամէն մէկը առանց յապաղանաց իվերջ տարւոյն հասցնել յԱտեանս տարեկան տեղեկութիւններն ու հաշուէմատեանները, եւ ամենեւին չյետացնեն անցեալ 1862 տարւոյն հաստատուած ցուցակով սահմանեալ ժամանակներէն, որով եւ Առաջնորդական Ատեանս կարողանայ իւր ժամանակին հասցնել Բարձրագոյն Իշխանութեանը, ուստի Ատեանս հարկաւոր դատեց կրկին անգամ յիշեցնել նոցա սոյն իւր պատուէրը, յաւելլով եւ զայս՝ որ եմէ այս տարի որ եւ իցէ Հոգեւոր Կառավարութիւն կամ քահանայ սովորական անհոգութեամբ կամ դանդաղանօր ժամանակին չհասցնէ այն ամէն տեղեկութիւնները, ոչ թէ միայն առանձին հրամանագրով յանդիմանութիւն պիտի լսէ վիճակային Ատենէն, այլ եւ նոյն յանդիմանութիւնը թեմական Տեղեկութեանց միջով ալ պիտի հրատարակուի Ամաագրոյս մէջ, ինքատ եւ իզգուշութիւն եւ այլոց ամենեցուն :

ՅՈՐԱԳՐՈՒԹԵՆԷ ԱՄԻՆ

1860.

Մարտի 25. — Առաջնորդական Ատենիս շրջաբերական հրամանագրաւ ղրկուեցաւ բոլոր Հոգեւորական Կառավարութեանց եւ քահանայից վիճակիս Վեհափառ Կաթողիկոսի օրհնալից կոնդակին օրինակները, եւ Սրբազան Առաջնորդին յորդորանաց գրերը ժապաւինեալ տետրակներու հետ, որ իւրաքանչիւր եկեղեցի կարգացուցելով այն յորդորական թղթերը՝ Քրիստոսասէր ժողովուրդք առատասրտութեամբ գրուեցան այն տետրակներու մէջ իրենց աստուածահաճոյ տուրքը եւ կամաւոր նուէրքը ինպստ ազգակից եւ Հայադաւան եղբարց, որք վնասուեցան Շամախույ եւ Կարնոյ գետնաշարժութենէն եւ հրկիզութենէն : Հաւաքուած գումարը նուիրեցաւ Վեհափառ Կաթողիկոսին՝ որ իւր բարեկարգ տընորէնութեամբ մատակարարէ մեր կարօտեալ եղբարցը :

Յունիսի 2. — Առաջնորդական Ատենիս Ատենադպիրն Խաչատուր Տապախեան իւր խնդրա-

նացը համաձայն՝ անձնական տկարութեան պատճառաւ արձակեցաւ իւր պաշտօնէն, եւ նորա պաշտօնը յանձնուեցաւ ժամանակաւորապէս Ատենիս Դիւանապետ Կուսկերնսքի Սերբեթար Մարտիրոսի Սաթուհեանց :

Յունիսի 6. — Համաձայն խնդրանաց վեհապատիւ Հոգաբարձուն եկեղեցեաց երկուց մայրաքաղաքաց Տեառն Խաչատուր Լազարեանց, Գաղտնի Խորհրդականի եւ Սենեկապետի Վեհափառ Կայսեր Ռուսաց, Ս. Փեթրպուրկի եւ Մոսքուայի եկեղեցեաց համար Նախիջեւան քաղաքէն երկու ուրարակիւր դպիրք նշանակեցան, այսինքն Նիկողայոս Տէր-Սարգսեան եւ Մարգար Չէրքէզեան, որոց վարուց եւ բարուց լաւութեանն ու ծայնէրնուն յաջողութեանը համար վկայած էր Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութիւնը :

Յունիսի 20. — Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութեան միջնորդութեանը համաձայն, եւ ըստ զօրութեան 1026 յօդ. Ա մասին ժև հատորոյ օրինակաց, հաստատուեցաւ Նախիջեւանի Թոփթի գիւղի եկեղեցւոյն երէցփոխան մեծարոյ Մանուէլն Թորոսեան իտեղի հանգուցելոյն :

Յունիսի 23. — Կերչ քաղաքի առեւտրական դատարանը հաղորդագրութեամբ ի14 յունիսի թիւ 1290, համաձայն 1096 յօդ. ժ հատորոյ Ա մասին օրինաց, առաքեց յԱռաջնորդական Ատեանս տեղեկութեան համար Պերտեանսք քաղաքի առաջնակարգ վաճառական Լուսեղէն Սուպաշեանցի կտակին վաւերական օրինակը, յորմէ երեւեցաւ որ նոյն բարեպաշտ վաճառականը կտակագրեր է ա) Խալիպեան Ազգային Ուսումնարանին չքաւոր աշակերտաց համար, 200 ռուպլի. բ) Թէոդոսիոյ աղքատաց համար 100 ռուպլի. գ) Սրբոցն Յովակիմայ եւ Աննայի վանուց Թէոդոսիոյ 50 ռուպլի, եւ դ) Սրբոյն Դէորդայ եկեղեցւոյն Թէոդոսիոյ 50 ռուպլ. որոց ընդ ամէնն գումարն է հինգ հարիւր ռուպլի արծար :

Յունիսի 27. — Ըստ զօրութեան հրամանագրի Սրբագումար Սիւնիոդոսի Ս. Էջմիածնի, որ ի21 մայիսի, թիւ 1031, եւ ըստ համաձայնութեան Արքուի Պալատան եկատերինոսլաւի՝ ընդունուեցաւ իշարս եկեղեցականաց վիճակիս՝ Նախիջեւանի բնակիչ Մարգարն Չէրքէզեանց :

Յունիսի 7. — Համաձայն Հրովարտակի Սիւնիոդոսին սրբոյ Էջմիածնի որ ի11 յունիսի, թիւ 1197, եւ ըստ կարգադրութեան Արքունի Պալատան Տաւրիոյ՝ արձակեցաւ իհարկատուութենէ եւ դասեցաւ իկարգս եկեղեցականաց վիճակիս. Թէոդոսիոյ բնակիչ Պետրոսն Կարապետեան Խալայեանց :

Օգոստոսի 4. — Նախիջեւան քաղաքի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ երէցփոխան երրորդ կարգի վաճառական՝ մեծարոյ Պետրոս Քացաեան, իւր իննամեայ հաւատարիմ եւ արդիւնաւոր ծառայութեանը համար վարձատրեցաւ Օգոստոսի 4-ին Կայսերէն արծաթեայ մեծ մետալի սրբոյն Ստանիսլաւի ժապաւինի վերայ, եւ այս պատուանշանը Առաջնորդական Ատենոս ուղարկեց Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութեանը որ յանձնէ զայն պատկանելումն:

Օգոստոսի 11. — Յովհաննէս քահանայն Մանտրահեանց իւր յայտարարական գրովը ծանոյց Առաջնորդական Ատենիս Թէ Սրպազար քաղաքի պատուաւոր վաճառական մեծարոյ Յարութիւն Աղայն Աբրահամեան Թամանով Նուիրեց երկու խանութը, մինն իմշտնջեանաւոր սեպհականութիւն եկեղեցւոյն վերափոխման սրբոյ Աստուածածնի, եւ միւսն իսեպհականութիւն ժողովրդական Գրպրոցի տեղւոյն. յիշեալ բարեպաշտ վաճառականը իւր աստուածահաճոյ եւ ինքնայորդոր Նուիրատուութեանը համար, որով բարի օրինակ հանդիսացուց իւր անձը այլոց առջեւ, ընդունեցաւ Աբրազան Առաջնորդին եւ Առաջնորդական Ատենիս յատկական շնորհակալութիւնը:

Օգոստոսի 11. — Նախիջեւանի սուրբ Լուսաւորիչ Աւագ եկեղեցւոյ դպիր Պողոս Սարըլեանց՝ իւր անվայել վարուցն եւ բարուցը համար, — ինչպէս վկայեց Նախիջեւանի Հոգեւոր Կառավարութիւնը եւ երեւցաւ օրինաւոր քննութենէն, — արձակեցաւ իսպառ յեկեղեցական կոչմանէ, եւ յանձնեցաւ մարմնաւոր իշխանութեան, որպէս զի գրեն զնա հարկատուաց կարգը:

Օգոստոսի 15. — Ըստ զօրութեան Կոնդակի Վեհափառ Կաթողիկոսին ամենայն Հայոց, որ ի 29 յուլիսի, Առաջնորդական Ատենիս օրագրական որոշմամբը՝ Կերչ քաղաքի ժողովրդոց հովուութիւնն ու տեղւոյն նորաշէն աղօթատան քահանայագործութիւնը յանձնուեցաւ Արժանապատիւ Աւետիս քահանային էմաստեանց Տրապիզոնցւոյ:

Օգոստոսի 22. — Սրբագումար Սիւնիոգոսն Ս. Էջմիածնի՝ Բարձրագոյն հրովարտակաւ ի 23 յունիսի, Թիւ 1255, բարեհաճեցաւ յայտնել Առաջնոր-

դական Ատենիս, որ ընդունելով Գրիգոր Բէրոյեանցի խնդիրը՝ Սիւնիոգոսն ինքնին Նոյն ամսոյ 1-ին բարեհաճեց ի կարգել զնա ի պաշտաման Քարտուղարի Հոգեւորական Կառավարութեան Պեսարապիոյ, ուստի եւ Առաջնորդական Ատենան իւր կողմէն արժանին տնօրէնութիւնը ըրաւ Պ. Բէրոյեանցին իւր յատկացեալ պաշտօնը յանձնելու՝ համարելով զնա ըստ ծագմանն աստիճանաւոր երկրորդ կարգի, իսկ ըստ ուսմանն երրորդ:

Սեպտեմբերի 1. — Վեհափառ Կաթողիկոսը լրացելով Նախիջեւանի Հոգեւոր Կառավարութեան Անդամոյ Գէորգ քահանայի Պալապանեանց մարդասիրական փոյթը եւ ջանքը, որ Նախիջեւանի Արքունի Հիւանդանոցի հրկիզութենէն իւր անձնական քաջութեամբ ազատեւ էր երեւանցի Գարսեւան Սիմէօնեան Արազեանց ազնուական պատանին, որ այն հիւանդանոցին մէջ կգրտնուէր երկար ժամանակէ ի վեր ոտնացաւ տկարութեամբ, ուստի եւ ինքն Սրբազնակատար Հայրապետն իւր սուրբ կոնդակաւ կշնորհէ վերոյիշեալ քահանային իշխանութիւն՝ կրել իւր կուրծքին լանջական քահանայական խաչ իխրախոյս եւ իքաջալերութիւն միւս քահանայից:

Սեպտեմբերի 29. — Էջմիածնի Սրբագումար Սիւնիոգոսի հրամանագրաւ որ ի 13 Օգոստոսի, Թիւ 1543, եւ ըստ հաճութեան Քերսոնի Գաւառապետին ընդունեցաւ իշարս եկեղեցականաց Գրիգորուպօլսեցի Սարգիս Տաւրիեմ, որ արձակուած է Նոյն քաղաքի հասարակութեան հարկատու կարգէն կանոնաւոր կերպիւ:

Հոկտեմբերի 20. — Վրաստանի եւ Իմէրէթի վիճակային Ատենին համաձայնութեամբն եւ իւր խնդրանացը զիջանելով, ընդունուեցաւ վիճակիս եկեղեցականաց կարգը՝ Ախլցխոյ սուրբ Փրկչի եկեղեցւոյ Աւագ քահանայն Արժանապատիւ Տէր Յակոբ Սուրէնեանց, որ եւ նշանակուեցաւ Աւագ քահանայ Սիմֆերոփոլի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ, միանգամայն ուսուչից Կրօնագիտութեան Հայ մանկանց Մարգարանին (*Կիմնագիտ*), եւ Օրիորդաց ուսումնարանին եւ ժողովրդական Հայ Գպրոցին. իսկ այն տեղի քահանայն Գէորգ ձէնանեանց տեղափոխեցաւ յեւպատորիա քաղաք:

